

տանի» լրագրի գրաշար էր և միաժամանակ աշխատակցում էր յիշեալ լրագրին. այնուհետև նա սկսեց ուսուցչութիւն անել հայոց ծիսական դպրոցներում և այդ ասպարիզում նա ցոյց տուեց լաւ մանկավարժի ընդունակութիւն. Մանուկներին հայ լեզուն ուսուցանելու գործը այնքան սիրելի էր նրան, որ նրանց համար նա պատրաստեց հայոց լեզուի մի շարք ընտիր դաստիքեր և հրատարակեց մանկական ընթերցանութեան համար բաւական թուռվ հեքիաթներ ու բանաստեղծութիւններ գողարիկ աշխարհաբար լեզուով, որոնք լոյս տեսան թէ զանազան ամսագիրներում և թէ առանձին գրքոյներով: Հրատարակեց նաև մի քանի գրքոյներ հայկական հնչիւնների մասին և մտցնելով իր դասագրերի ու հրատարակութիւնների մէջ ւ-ի ուղղագրութիւնը՝ մինչև իր կեանքի վերջը նա եռանդուն կերպով պաշտպանեց իր այդ նորամուծութիւնը:

Ութունական թուականներին նա մի քանի տարի վարեց թիֆլիզի թեմի հայ ուսումնարանների. թեմական տեսչի պաշտօնը: Մի խօսքով Աղայեանը իր ամբողջ կեանքը նուիրեց ուսուցչութեան և հայ մանուկների դաստիարակութեան գործին և հիմք գրեց մանկական գրականութեան հայոց մէջ և դրա համար էլ իր մահը ցնցեց ամբողջ հայութիւնը առանց կուսակցութիւնների խարութեան և մահից յետ արժանացաւ այնպիսի ցոյցերի և յարդանքների, որոնց արժանի են միմիայն մի ազգի խոշոր անձնաւորութիւններ:

Հանգուցեալը աշխատակցել է նաև Շումայշ-ին, ուր տպաւեց նորա և Ռ. Խանազատեանի թարգմանութեամբ թէլլամիի «Հարիւր տարի յետոյ» նշանաւոր վէտի հայ թարգմանութիւնը, որ ստկայն կիսատ մնաց խմբագրութիւնից անկախ պատճառներով:

* * *

Այս մեր կորուստներն էին այս տարուայ առաջին կիսին, որ ուրիշ կողմերից էլ միսիթարական ոչինչ չէ ներկայացնում հայութեան համար:

Կաթողիկոսական խնդիրը այնպէս է յուղել մտքերը, այնպէս գրգուել կրքերը, մամուլը մի այնպիսի զիրք է բռնել հրապարակում երեցած աչքի ընկնող ընտրելինների վերաբերմամբ, որ բարիս բուն նշանակութեամբ էլ ոչ մի հեղինակութիւն չթողին եպիսկոպոսների շրջանում, ամենըն էլ բամբասուեցան, ամենըն էլ բարդուած բազմազան երևակայական պակասութիւններով կեղտոտուեցան: Սպասենք, որ առողջ դատողութիւնը, լուրջ կըշռադատութիւնը յաղթէ ամեն տեսակ կրքերին և արժանաւորնե-

բից արժանաւորագոյնի ձեռքը յանձնէ ժողովուրդը իր ամենից նուրբական հաստատութիւնը:

* *

Պակաս անմիտար չէ և մեր տաճկահայ և պարսկահայ եղբայրների վիճակը. Երկու սահմանադրական երկրներումն էլ հայերի հրճուանքին սահման չկար. սակայն երկու տեղ էլ հայերի վիճակն աւելի վատթարացաւ, քան առաջ էր. Տածկաստանում հայերի դէմ հալածանքը, կեանքի և զոյքի անապահովութիւնը, կանանց և աղջկանց անապաշտպան վիճակը բարբարոսների վայրենի կրքերի դէմ, կրօնական անհամբերողութիւնը, հոգեորսների սանձարձակութիւնը, պաշտօնեաների թշնամական վերաբերմունքը դէպի դարաւոր տանջուած հայ ժողովուրդը, սիստեմատիք կոտորածները և ընդհանուր կոտորածի երկիւղը երկու ծայրայեղ միջոցների են ստիպել դիմել հայ ժողովրդին—անիծեալ և կորստարեր գաղթին և ոչ պակաս կորստարեր հայ ժողովրդի համար՝ կրօնափոխութեան: Կ. Պօլսի հայ թերթերը վերջերս գուժեցին, որ Զարսանճագի, մի ամբողջ թեմի հայ ժողովուրդ դիմել են ոռւսաց հիւպատոսին և խնդրել, որ իրանց ընդունեն յոյն եկեղեցու գիրկը, որպէսզի վախճան գրուի իրանց անտանելի կացութեան, ընտրել են չարիքի փոքրագոյնը, որ մարմինը փըրկելու համար միայն հոգին կորցնեն, փոխանակ այժմեան նման հոգին և մարմինը միանգամայն կորցնելու: Զարսանճագի առաջնորդը հեռագիրներով զեկուցել է այս ծանր դիպուածի մասին Կ. Պօլսի պատրիարքարանին. չգիտենք սակայն ժամանակ և սիրտ ունի այդ ժողովը մի ամբողջ ժողովրդի կորչելու մասին մտածելու...

* *

Իսկ Պարսկահայերի վիճակը մաղիցն է կախուած. Պարսից կառավարութեան դիմումը Թաւրիզի հայոց առաջնորդին, որպէս զի Պարսկաստանի Հայերը չեղոք պահեն իրանց և չխառնուեն քաղաքական հարցերին, մի վտանգաւոր սպառնալիք է նրանց. պարսկահայերի կոտորածը անխուսափելի կլինի, եթէ նրանք չզսպեն իրանց եռանդը և խոհեմութեան շաւղի մէջ չպահեն իրանց:

* *

Ժողովրդական այս աղէտալի շրջանի մէջ եթէ մի փայլուն կէտ կայ՝ այդ գրականութիւնն է. չի կարելի ասել, թէ կովկասում կամ Տաճկաստանում հրատարակուող գրքերի մէջ երկան են գալիս գլուխ գործոցներ և տաղանդներ է որ ասպարէզ են գալիս ամեն կողմից. բայց մի բան գոնչ միիթարական է, այդ այն է, որ հայերէն լեզուով հրատարակութիւնների թիւը բազմապատ-